


# Հայրենեաց



TRAIN  
WAIKENIATZ  
AN ARMENIAN WEEKLY.

ՀԱՍՑԷ  
AMERICAN HAY PUBLISHING Co.  
209 E. 23d St., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter

Subscription \$1.50 a Year.

ՀԱՐԱԲ-ՍԵՊՏԵՐ

## ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ միջոց. — Պահանջ մը. — Մահա-  
գոյժ Բ. Չաքրեանի. — Նամակ Մարտի-  
չէն. — Արձագանգ Փրօփիտէնէն. — Նա-  
մակ Ուստրէն. — Գործադուլ (նամակ Պը-  
րէքթընէն). — Գաղափարական. — Ներքին  
Լուրեր. — Բանասիրական (երկրագործ-  
ութիւնը և անոր պահանջը):

### ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅԻ

#### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ձայն Հայրենեացի տարեկան շրջանը  
կըստի 1899 Սեպտ. մինչև 1900 Սեպտ. :  
Ա. վեցամսեայ 99 Սեպտեմբերէ 1900  
Փետրվար. Բ. վեցամսեայ 1900 փետր-  
վարէ Սեպտեմբերի:  
Բաժանորդագրութեան շրջանը կընդու-  
նինք այս հաշուով, և ոչ թէ մէկ թուէ  
միւս թիւը հաշուելով:

\*\*\*

Կը յայտարարենք որ այլևս եւս մ-  
սեայ բաժանորդագրութիւն չենք ըն-  
դունիր: Վեցամսեայ բաժանորդագրինք  
85 սէնթ է. տարեկան \$1.50:

Բաժանորդի փոխարէն նամակադրօջմ  
չենք ընդունիր:

Կը խնդրենք ուշադրութիւն դար-  
ձնել մեր նոր հասցէին՝  
American Hai Publishing Co.,  
209 E. 23d St., N. Y. City.

Ամերիկայի Հայ Հրատարակչական  
ընկերութեան հետ յարաբերել ուղղուե-  
րը կամ անդամակցել ցանկացողները դի-  
մելու են վարչութեան Ատենակազմին,  
հետևեալ հասցէով:

Mr. G. Martougessian  
180 P. O. Box  
Providence R. I.

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ԵՐԿՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՅՄԱՆԸ

Մարդը իր գոյութեան առաջին շըր-  
ջաններուն մէջ ապրեցաւ վայրի պտուղ-  
ներով, որսորդութեամբ, ձկնորսու-  
թեամբ և հովուութեամբ:

Առաջին արհեստը, որ մարդուն թէ  
մտքը թէ մարմնի աշխատութեան արդ-  
իւնքը եղաւ, հաւանօրէն երկրագործու-  
թիւնն է:

Երկրագործութիւնը աշխարհի սկիզ-  
բէն մինչև հիմայ՝ ամենէն շատ մարդ  
զբաղեցնող և ապրեցնող արհեստն է-  
ղած է:

Երկրագործութիւնը սակայն, ամեն  
ատենի մէջ, և մինչև աստիճան մը ա-  
մեն ժողովուրդէ ալ ցած ու անյարգ  
արհեստ, ազգայի ու ապրիկարի զբաղում,  
ուսումնական շարժումներու շարժում  
մը նկատուած է, և երկրագործն ալ ար-  
գէտի, կրօնի, անասնաբանի և անճանչի ա-  
մենէն մեծ օրինակը համարուած է:

Սակայն քաղաքակրթութիւնը որ-

### Ի՞ՆՉ ՄԻՋՈՑ

«Պէտք է ժողովրդի ներքին կենսին  
զարգացնել, և առ կենսին երկրագոր-  
ծութեան մէջն էն; կը գրէ վանի մեր  
թըղթակիցը, և Հայրենեաց ծոցէն կու-  
գայ ան կարեւոր հարց մը ներկայացնե-  
լու մեզ:

Հայաստանի ներկայ անտեսական տագ-  
նապալի վիճակը, տառամերու սրտախոյզ  
պատմութիւններ կը բերէ: Սո՛վ, անվերջ  
սո՛վ: Ու Հայրենեաց մէջ գտնուող դժ-  
բաղդ ժողովուրդը մեր ձեռքէն ստացած  
բոլոր մը հասցով, պահ մը միայն կը  
կշտացնէ իր սոված փորը: Կարծես թէ  
վերջ չունի առ դժբաղդութիւնը: Եթէ  
ուրիշ նպատակներ դարձնենք չը գան  
վերջ տարու այս ցաւոտ վիճակին, նուր-  
բատութիւնները չեն փրկիր ժողովուր-  
դը: Միւս կողմէն ալ ատ միջոցը Հայ  
պատուասիրութեան էն գեղեցիկ զգա-  
ցումը կրնայ մեղցնել: «Մինչև ե՛րբ ժո-  
ղովրդի նկարագիրն սուրկացնող սա մու-  
րացկանութիւնը», իրաւամբ կը բողբէ  
յարգելի թղթակիցը:

Այս անտեսանի վիճակին վերջ մը  
տալու ի՞նչ միջոց կայ: Ասոր կը պատաս-  
խանէ յարգելի թղթակիցը՝ «Վէ՛րք չի  
դարձանաւիր մինչև որ ժողովուրդը չը  
կարենայ ինքն իրեն օգնել, և այս շղիթի  
կրնայ, քանի երկրագործութիւնը ներկայ  
վիճակի մէջն է: Միակ միջոցը՝ պէտք է  
զօրացնել երկրագործութիւնը մեքենա-  
կան ոյժով: Գիւղացին պէտք է ունենայ  
վարելու, քաղելու և մանրելու մեքենայ,  
որ ժամանակ և միջոց ունենայ իր ար-  
տերը պարտաւանդելու:»

Երկրագործութիւնը Հայ ժողովրդի  
հոգին է, անով ապրած է Հայ ազգը,  
անով կենսը ունեցած: Հայ գութանի  
երգը օրօրոցն կրկնելու մասով դժբաղդ  
արիւնի տարիններէն յետոյ երկրագործու-  
թիւնը Հայաստանի մէջ մեծ հարուած  
կրեց: Գոմէն ու եղը կողպատուեցան,  
իսկ Հայ գութանը ջախջախուեց: Եւ ա-  
հա՛, առ ծնու սովի ներկայ ահալի օ-

շափ կը յառաջանայ, երկրագործութիւնն  
ու երկրագործն ալ այնչափ կարևորու-  
թիւն կրտանան ու վարկ կը քանեն:

Եւրոպայի մէջ զուտ երկրագործա-  
կան վարժարանները վաղուց գոյութիւն  
ունէին, իսկ Միացեալ Նահանգներին մէջ  
այս դարուն սկիզբէն սկսան հաստատու-  
ել, և այսօր Ամերիկայի 45 նահանգ-  
ներէն ամեն մէկն ալ իւր առանձին և  
զուտ երկրագործական վարժարանն  
ունի:

Այս երկրի այն նահանգները, որոնք  
մեծ ու բազմամարդ են, նահանգային  
պաշտօնական համալսարան ունին, և  
երկրագործութիւնը հոն իբր մասնագի-  
տութիւն մը կը սուրվեցուի, ուրիշ գիտա-  
կան և արտեսական մասնագիտութիւն-  
ներու նման ինչպէս, Նիւ Եորք և Իլլի-  
նոյզ նահանգները. իսկ փոքր նահանգ-  
ներու պաշտօնական վարժարանը երկրա-  
գործական քօլէճէ մը կը բաղկանայ ինչ-  
պէս Մէսէչուսէթս, Բոս Ալլընս և Բը-  
նէթըքէթ:

Միացեալ Նահանգները երկրագոր-  
ծական մեծ երկիր մ' է աշխարհի մէջ:  
Այս ժողովրդին 100ին 46ը երկրագոր-  
ծութիւնով կ'ընթացի, ուստի շատ քնա-

րերը:

Բայց եթէ աւելի խորաթափանց ա-  
չով նայինք, Հայ իւր նահապետական  
գութանով գրեթէ միշտ հաղիւ կրցած  
է իր օրապահիկը ճարել: Գոցէ առար-  
կողները ըլլան թէ՛ եթէ Հայ գիւղացիի  
բերքը Հայ գիւղացիի ամբար մանէր,  
քիւրսն ու վաշխառուն չը կողպատէին  
գանի, կառավարութիւնը չկեղեքէր, Հայ  
գիւղացին պիտի կրնար բարեւք վիճակ  
մը ունենալ: Բայց ո՞ր ստան: Ամենէն  
ստատ ու բերրի տարին, որ ժամանակ  
գիւղացին կրցած է ծախու ցորեն ունե-  
նալ, արժէքը քառասպտակի և աւելի ի-  
ջած է եղեր հրապարակի վրայ, և գիւ-  
ղացին դարձեալ զրկուած է եղեր շա-  
հէն, ուրիշ ժամանակ պարտուց տուած  
մէկի փոխարէն՝ սարկուած է եղեր շորս  
տալ, ու ինքը դարձեալ ձեռնունայն է  
մնացեր. ինչպէս որ ժողովուրդ ինքը  
ճիշդ կերպով վճարած է. «Առատ տարին  
մերկ կը մնանք, պակաս տարին անօթի»: Ի-  
սկ անդին, շնորհիւ նահապետական  
գութանի շատ մը հոգի կատարելապէս  
անձալկ են մնացեր: Բայց ընդունինք  
սա ճշմարտութիւնը, եթէ գութանի տեղ  
մեքենան վարէր, ցանէր ու քաղեր, ար-  
քա՛ն աւելի բերք կունենար գիւղացին,  
որքան աւելի կրնար դարձանել նա իր  
անթիւ վէճերը:

Հայաստան ու մեքենայ, պիտի ըսնն  
ինչու կողմ մը. հոն հասնելուն ճիշդ երկ-  
րորդ օրը քիւրսը պիտի կատարէ ու տա-  
նէ: Բայց քիւրսը կը կտարէ և գութան,  
կը իւլէ եղը, կըսպաննէ երկրագործը. ու-  
րեմն մենք ձեռքերնիս ծալած մահուան  
սպասենք. ուրեմն մեզ այժմ մնացեր է  
միայն երեմիականներ կարգալ: Որով-  
հետեւ քիւրսը այդպէս կընէ, ուրեմն  
մենք ո՛չ խորհուր, ո՛չ մտածելու և ո՛չ  
ալ գործելու ենք: Գիւրսը կրնայ իւլել  
եւ այն կտար հայը որ ողորմութեամբ  
գիւղացիի ձեռք արուած է:

Հայաստանի երկրագործութիւնը բա-  
րելաւելու, մեր կարծիքով ուրիշ մի զօ-  
րուոր արգելք կայ, որու դժբաղդ իրա-

կան է որ երկրագործութեան և երկրա-  
գործական վարժարաններու ալ շափա-  
զանց կարևորութիւն արուի:

Հաշուուած է որ աշխարհի մէջ միջին  
հաշուով տարուէ տարի 3,000,000,000 գր-  
ուան (bushel) եգիպտացորեն կարտադր-  
ուի, այս բերքէն շատ մեծ կալ մասը,  
գրեթէ 2,400,000,000 գրուանը, միակ  
Միացեալ Նահանգները կարտադրէ:

Ու Եւրոպան, ինչպէս որ աշխարհի  
ամենէն զարգացեալ մասն է, նոյնպէս  
ալ աշխարհի ամենէն մեծ երկրագործն է:  
Հաշուուած է նաև որ միջին հաշուով աշ-  
խարհի մէջ տարին 1,600,000,000 գրուան  
ցորեն կ'արտադրուի, Եւրոպան այս բեր-  
քին գրեթէ 1,200,000,000 գրուանը կար-  
տադրէ: Իսկ Միաց. Նահանգները իրենց  
երկրին համար պէտք եղածին շափ ցո-  
րեն արտադրելէ վերջ, մեծ կալ մաս մըն  
ալ օտար երկրներու կը ծախեն:

Ճարտարութեանց և վաճառականու-  
թեանց մէջ միւրճուողի երևույթն ունեցող  
Միաց. Նահանգները և Եւրոպայի ժողո-  
վուրդը՝ ահա, կը տեսնենք թէ աշխարհի  
երկրագործական բերքերու մեծագոյն  
մասին արտադրողն է: Ուրեմն, ամենէն  
զարգացեալ ազգերու մէջ այսչափ մար-

կանութեան առաջ չենք կրնար շը խոնար-  
հիլ:

Ո՞վ է այն երկրագործը որ մահը թո-  
ղած պիտի կրնայ մեքենայով փորել ու  
գայն ղեկավարել. սմբողջ Հայաստանի  
մէջ բացառութիւն կազմող թիւը չափա-  
զանց աննշան է եւ այդ բացառութիւն-  
ները չեն կրնար ընդհանուրին պատկա-  
նիլ: Երկրորդ հարց մըն ալ ո՞ր մեքե-  
նագործ արհեստաւորն է որ պիտի կրնայ  
կոտրած մեքենային ամենափոքր մասն  
անգամ նորոգել: Որքան կը յիշեմ Հա-  
յաստանի մէջ մեքենայով քաղելու փոր-  
ձերը եղած են եւ արգիւնքը նպատա-  
ւոր եղած է. սակայն վերջին դժուարու-  
թիւնը վերջ տուած է յաջողութեան եւ  
մեքենան անպէտք դարձուցած:

\*\*\*

Այստեղ թող ներուզի մեզ միջանկ-  
եալ երկու խօսք յառաջ բերելու: Մենք  
աւհասարակ տարօրինակ սովորութիւն  
մը ունինք. միշտ ներկայի ու շատ մօ-  
տիկ ապագայի մասին կը մտածենք, հե-  
ռուոր ապագան մեզ համար գործը ին-  
չունի: Միշտ վաղուան համար կը խոր-  
հինք. վերջը փնտռել, վերջը գ. նեկ շի-  
տենք: Եւ երբեք առ զպատճառ որ մեր  
ամեն գործերու մէջն ալ շտապանք մը  
կը նկատուի: Ներկայ արժարձուող հար-  
ցը եթէ չունենայ ալ իր մօտաւոր գործ-  
նական օգուտը, դէթ կուգայ օրուայ  
պահանջ մը դնելու մեր առաջ: Հայրե-  
նիքի երկրագործութիւնը ծաղկեցնելու  
համար էն առաջ մեզ համար ստոր պա-  
րաստուած ոյժերը պէտք են: Եւ առ պի-  
տի մատակարարէ արտասահմանը, ուսա-  
նողական թարմ ոյժերով:

Գծադրաբար Ամերիկայի մէջ ուսա-  
նողութիւնը շատ աննշան թիւ մը կը  
կազմէ: Եւ մեր ուսումնասանող երիտա-  
սարդները կամ բժշկութեան ետեւէն կը  
վազեն կամ աստուածաբանութեան: Ե-  
րբեք մէկ Հայ հիւանդը, միւսը հիւանդ  
հոգին բժշկելու համար. . . Բայց աստու-  
մէ աւելի մեծ հիւանդ մը կայ, մեր երկ-

դոց զբաղում, և մարդկային ազգի գո-  
յութիւնը պահպանելու միակ միջոց ե-  
ղող արհեստին, երկրագործութեան,  
յարգը ճանչնալու ենք, և կարծէ որ խո-  
րաթափանց ըլլանք խնդրուն մէջ և ու-  
սումնասիրելով գիտանք օգտակար ըլլալ  
մենք մեզ:

Երկրագործութիւնը մեր օրով գի-  
տական մասնագիտութեան և ճարտար-  
արուեստ մը կը սեպուի, և բժշկութեան  
իրաւագիտութեան, մեքենագիտութեան  
նման պէտք է գալարոցի միջոցաւ և գիտա-  
կանօրէն սովորել թէ. ինչո՞ւ պարզենք  
մեր սեսութիւնները:

Գիտութիւնը կը հաստատէ թէ՛ բոյ-  
սերն իրենց անմասն միջոցին, իբր սնունդ  
գլխաւորաբար երեք նիւթերու կը կարօ-  
տին, բորոկածին (nitrogen) բոսորական  
թթու (phosphoric acid), և բոքաս  
(potash):

Մէն մի բոյսի սննդակոն այս բու-  
սային կերակուրէն (plant food), տար-  
բեր քանակութիւն և տարբեր բազադ-  
րութիւն կը պահանջէ, ուստի երկրագոր-  
ծը պարտ է գիտնալ թէ՛ ի՞նչ համեմա-  
տութեամբ խառնելու և իւրաքանչիւր  
բոյսին ի՞նչ սեպակ արգասաւորիչ

րին հողը հիւանդ է, ատոր բժշկներուն պէտք ունինք մենք: Գիւղատնտեսներ ու երկրագործները ընդմիջում պէտք են մեզ: Մեր նպատակին հասնելու համար էն առաջ մեր ջանքը պիտի ըլլայ ստեղծել հոս ուսանողական ոյժ մը:

\*\*\*

Անդրադառնանք մեր հարցին. թողունք անդի, գիրքի եւ յաջողութեան պայմանները մասին եղած առարկութիւնները, ինկատի ունենանք որ քաղաքական հանգամանքները բոլորովին աննպաստ են մեզ, արդեօք մեքենական ուժի Հայաստան մտնելուն անհեղ գործը պիտի թողաւորու՞նք, կամ հոն պիտի երաշխաւորուինք՝ անոր ապաւովութիւնը: Ինչ որ ալ ըլլայ կենսական հարց մըն է սա, որ հրապարակի վրայ կը դրուի այսօր, մեզ կը մնայ կամայ կամաց խոհուն աշխատութեամբ գիտիլ զի՞պի այդ նպատակը:

Հայաստանի աշխարհագրական դիրքի, հողի, տնտեսական վիճակի անցնալի ու ներկայի մասին ուրիշ անգամուան թողլով մեր տեսութիւնը, կուգամ հետեւեալ հարցեր ուղղել մեր խորհող դասակարգին, սպասելով որ անոնք հրապարակօրէն յայտեն իրենց կարծիքները:

Ա. Նպատարաւորութիւնն որ ձեռնարկ օգտակար է: Ժամանակակից ուղորմութիւնն ալ, թէ՛ այլ միջոցներով, գործ ստեղծելով, փրկել ժողովուրդը թշուառութեան ճանկերէն:

Բ. Մեքենան ինչքան կրնայ նպատակ մեր երկրի երկրագործութեան դարգացման, կամ ի՞նչ հանգամանքներ ու ներքին պայմաններ կան մեքենայի յաջողութեան արգելք: Եւ թէ ի՞նչ տարբերութիւն ունի Ամերիկայի հողը մեր հայրենիքի հողէն. այստեղի մեքենան կրնայ հոն գործել:

Հայաստանի տնտեսական վիճակի բարելաւումը օրոքայ կենսական ու հրատապ հարցերէն մինն է. պէտք է ընենք այն՝ ինչ որ կրնանք:

Վ. ՇԱՀԷՆԻ

ՊԱՀԱՆՁ ՄԸ

Այն թերթը որ լաւ կը ճանչնայ իր խմբագրականին մէջ թխած հետեւեալ նախագաւառութիւնը,

«Ձեռքի անի հանդէսին հաշիւները տակաւին քաշկուտով հիւստէն կ'ակնկալուէք սեւ զգալարութիւնը»

Կր պահանջներ որ քոյր մեկդի նետելով՝ պարզ ու բացայայտ խօսի եւ որոշ ամբաստանութիւն մը ներկայացուէ՞ք, անոնք որ ամեն մարդ հասկնայ:

(fertilizer) տալու է:

Երկրագործը հողին բազադրութիւնը եւ տեսակները ճանչնալու է, գիտնալու է թէ՛ այս ի՞նչ հողը ի՞նչ տեսակ բոյսերու կը յարմարի, եւ կամ այս ի՞նչ բոյսը ի՞նչ տեսակ հողի վրայ մշակելու է:

Արմտեքները, բանջարեղէնները եւ պրուզները շատ մը աւելի թշնամիներ ունին, գոր օրինակ՝ սրգերը, թրշուները եւ միջատները. երկրագործը ճանչնալու է իւր բոյսերուն աւելի ու օգտակար եղող որգերը, ու փաստակարները ջնջելու կերպը գիտնալու է:

Բոսան, քան եւ հինգ տարիներէ իվեր Ամերիկայի մէջ տեսակ մը որդ երևան եկած է, զետնասնձորի որդը (թէ՛վէ՛կը), որ կուտէ ու բոլորովին կը չորցնէ: Այս որդերը այնչափ բազմաթիւ են, որ գետնասնձոր տնկուած ամեն արտի մէջ իւրաքանչիւր բոյսի վրայ 100էն մինչեւ 200 հատ կարելի է համարել. եթէ երկրագործները գիտութեան ցուցուած միջոցաւ այս աւելի ուրդերը սպաննել չգիտնային, իբր տարուան մը բերք լիար մը գետնասնձոր հողէն հանելու անկարող պիտի ըլլային:

Խորհրդի մէջ շատ անգամ տեսած ենք, որ կաղամբի ամբողջ տարուան բերքը մանր՝ բայց անթիւ որդիկներէ (ժողովուրդի բառով կէօշօնքի) փշաջած ըլլայ. ու մենք այս աւելիներուն զէ՛մ դարման մը չունենինք կամ չը գիտէինք:

ՄԱՀԱԳՈՅԺ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱՔՐԵԱՆԻ

«Իրաւունք»էն կը տեղեկանաք թէ՛ Պուրբէշի «Բօլցէա» հիւանդանոցին մէջ 35 օր թողախտէ տառապելէ յետոյ հոգին աւանդեր է, յայտնի հայրենասէր, ժողովրդական անմահ յեղափոխական, Չէյթունցի Յարութիւն Չաքրեան, ԼԵՐԱՆ ՄԱՐԴԸ:

Պուրբէշի փոքրաթիւ հայ գաղութը անտարբեր չէ մնացեր հանգուցելոյն շիրմին առաջ, եւ 114 ֆրանքի գումարով մը հանգանակութեամբ հոգացեր է ողբացելոյն յուղարկաւորութեան ծախքերը:

Յարութիւն Չաքրեան եղական զէ՛մբ մըն էր, եւ անմահ անկեղծ հայրենասէր եւ անվախ քաջութիւնը ունէր ազատօրէն հարուածելու յեղափոխութեան փնտաւար տարրերը, պատուելու գիմակները, ու կուտելու զեղծումներու զէ՛մ: «Կատակ»ի եւ «Տաւրոս»ի հրատարակութեամբ իւր ջանքը եղաւ յեղափոխական ասպարէզը մաքրել բաղդախնդիրներէ: Ասոր համար էր որ այնչափ անխիղճ ու անարդար հալածանք մը սկսուեցաւ իւր զէ՛մ: Ինչչեւ անգամ զինքը զբարարացին որպէս մասնիչ. խնդրել դատարան հասաւ ու զբարարացիները դատապարտուեցան:

Չաքրեանի մահով հայ անկեղծ գործիչներու շրջանակը մեծ կորուստ մը կուենանայ: Իր կեանքը բեղմնաւոր է եղած ու նուիրուած հայրենիքի փրկութեան դատին: Կը ջանանք ուրիշ անգամ մը այս սխեռակներու մէջ տալ անոր կենսագրութիւնը:

Թող բազմաշարքար ոսկորները հանգչին ցուր հողին տակ, թող լռեն քո անթիւ վիշտերը, անմահը հայրենասէր, քո բարի համբաւը, քո պաշտած գաղափարները դառափարակիցներուց առաջնորդ պիտի ըլլան: Չէյթունցի ԼԵՐԱՆ ՄԱՐԴԸ պիտի ապրի: Ներքի դու անոնց, որոնք գուցէ գերեզմանիդ վրայ ալ հայ հայտններ պիտի թափեն, դեռ չթարթումա՞ծ չիքմի՞գ պսակները:

ԱԼԷՍԹՃԱՆԻ ԳԻՐԳՈՐԻՍ ԵՊ. ՀԻՒԱՆԻ Է

Կ. Պօլսոյ Լրագիրները կը հազարդեն որ Ամեն Գրիգորիս կ'ալ Ալէսթճանի շատ ծանր կ'անէր է. բժիշկները յայտարարել են թէ՛ թէ՛ թէ՛ յուզումը եւ բարկութիւնը մը կրնան կաթուած յառաջ բերել, վասնզի արեւը գլուխը համակուած է: Այս պատճառաւ տեսակցութիւնները բացարձակապէս արգելուել են: Ալէսթճանի սրբազանի նիւթական անցկութեան համար հանգանակութիւն կատարուել է Կ. Պօլսոյ մէջ:

Երկրագործը գիտնալու է թէ՛ հողը ի՞նչ նպատակաւ կը վարուի, եւ ի՞նչ պէ՛տքերն ու քանի՞ անգամ վարելու է որ ամեն նկատումներու գոհացում տայ:

Երկրագործը կ'ենթանկներ ազդին եւ վաճառականական — արգասաւորչներուն (commercial-fertilizers) տարբերութիւնը, եւ բոյսերու վրայ ըրած ազդեցութիւնը գիտնալու է: Ինչպէ՛ս եւ կիրի, գածի (gypsum) եւ արիւնի (չօր) հողին արգիւնարեութեանը վրայ ըրած ազդեցութիւնը:

Երկրագործը պետք է սովորի իր պահած անասուններուն մէջ եղած տեսակ տեսակ հիւանդութիւնները դարմանելու եւ անտերու ծաւալումը արգիւնելու միջոցները, որով կ'երեմնի իր անասունները մէկ անգամէն կ'արանցնելու ծանր դժբաղդութեանէն կազատի:

Վերեւ յիշուած պատճառներուն հետ շատ մ'ուրիշ ոչ նուազ կարևոր պատճառներ ալ կը պարզեն ու կը հաստատեն թէ՛, երկրագործութիւնը լոկ ֆիզիքական կոշտ ու չարաչար աշխատութեամբ յառաջ տարուելիք գործ մը չէ, եւ յաջող արդիւնք ստանալու համար, պէտք է նաև գիտնականօրէն եւ բնութեան օրէնքներուն համաձայն ալ գործել:

Ուստի հիմա շատ պարզ կը տեսնենք թէ՛ երկրագործական դպրոցն ու կրթութիւնը անխուսափելի հարկ մը կը դառնան երկրագործ ժողովրդին եւ ընկերութեան համար:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՄՈՐՈՒՅՈՒՆ

Օգոստ. 25, 99.

Ներկայիս Ամերիկայէն հայրենիք վերադարձողներու թիւը երթալով կուենանայ այս տեղ: Բանի մը հողիներ Սամսոնէն ետ դարձուեցան ու հոս եկան: Ասոր պատճառ եղած է հետեւեալը: — Տարի մը առաջ հայ մը Նարբերէն «Թերկի թափախ» կ'ընէ եւ ընտանեօքը Ամերիկայ կուգայ: Վերջերս նոյն անձը իւր ընտանեօք երկիր կը վերադառնայ, որը Սամսոն ելալուն պէս կը հարցաքննուի եւ կը գտնուի թէ՛ ժամանակաւ թերկի թափախ ըրած ու Ամերիկայ գացած է, ու այժմ կրկին ետ եկած:

Թերկը կատալարութիւնը Բաքէի շոգեն սաւային ընկերութեանէն կը պահանջէ որ իր այս բերած մարդիկը ետ տանի: Առաջարկութիւնը կ'ընտրուի Մեսաթէրի ընկերութեան նաւով ետ զրկել, իր զանձէն վճարելով անոնք վերադարձին ծախքը: Ասոր վրայ փոքրագի կատալարութիւնը կուզէ վրէժ լուծել եւ այդ կընէ Ամերիկայէն Սամսոն ելող ամեն հայ ետ դրկելով:

Արդ հակառակութիւն ծագած է Մեսաթէրի եւ Բաքէ նաւային ընկերութիւններու մէջ: Անոնք ուէ Հայու, որ Թերկը երթալ կ'ուզէ, սոմասկ չեն տար, քանզի Թերկը Նաւահանգիստը Ամերիկայէն գացող Հայեր չի ընդունիր: Այսօր 20 էն աւելի Հայեր Մորսէլի փողոցները յուսահատ կը շըրջին:

Թուէս երկու օր առաջ բոլորս միասին եկանք ու հեռագրեցինք Սամսոնի Առաջնորդին հարցունելով թէ՛ արդեօք Ամերիկայէն գացող բոլոր Հայերը ետ դարձուեն կամ համար կայ թէ՛ ոչ: Մինչեւ այսօր պատասխան չենք ստացած: 8 օր առաջ ալ Կ. Պօլսոյ Պատրիարքին հեռագրած ենք, անկէ ալ պատասխան չտանք:

Յ. Կ. ԱՐՏԱՇԷՍ

Վերջին պահու Մարտէլի նոյն թղթակցէն Օգոստ. 30 ամաթիւ նամակ մը ստացանք, որով կ'իմացնէ թէ՛ Սամսոնի առաջնորդէն պատասխան ստացած են թէ՛ անոնք, որոնք թարկի թափախ չեն՝ կրնան վերադառնալ: Միայն, կը գրէ թղթակցը, կը ցաւիմ ըսելու, որ միայն երեք օր տեւեց, եւ կրկին մերժուեցաւ երթալը: Տեղոյս նաւային

Մենք Հայերս, իրենէ երկրագործ ժողովուրդ մ'ենք: Բայց մեր մշակութեան արդի եղանակները քաղաքակրթեալ աշխարհի ունեցածին հետ բազաւտելու բնաւ եզր մը չենք կրնար գտնել: Եթէ երկրագործական կրթութիւնը Ամերիկայի եւ Եւրոպայի երկրագործին համար անվիճելի կերպով օգտակար է, ալ Հայ երկրագործին համար կենսական եւ ամենակարևոր պահանջ մը նկատուի է:

Մենք կը վարենք, կը ցանենք, կը մըշտակենք եւ կը հնձնենք այնպիսի գործիքներով եւ մեթոտներով, որ թերս առաջին երկրագործ մարդուն ձեռք ունեցածէն բնաւ չտարբերի, վստահաբար կրնանք ըսել թէ՛ նախնական օրերու վրայ բնաւ փոփոխութիւն մը չէ կրնա:

Կը վարենք այնպիսի արօրով մը, որ կարծես հողին վրայ գիծ մը կը քաշէ, ան ալ հողի աւելուած չափ դանդաղ կերպով մինչ վարելուն մեծ նպատակն է հողը շրջել եւ տակի արգասաւոր հողը վրան հանել, բայց երբեք նոր սնունդ մատակարարելու համար:

Հնձելու ստան զեռ ձեռքի մանգաղով կը հնձնենք, մինչդեռ մէկ մեքենան 20 մարդու չափ արագ կրնայ հնձել:

Քաղահան ընկու ստան բրիչով մը հազիւ քանի մը կանգուն տեղ կրնանք քաղահանել օրուան մը մէջ, մինչդեռ նորագոյն մեքենաներով մարդ մը օրական 10 գրի տեղ կրնայ քաղահանել: Ուրեմն փոխելու ենք մեր արօր

ընկերութիւնները բնաւ սոմասկ չեն տար ո'ւ է Հայու Տաճկաստան երթալու համար, մենք ամեն միջոցի դիմեցինք, բայց անկարելի եղաւ: Ներկայիս չափազանց արգելներ կան, չըլլայ թէ՛ մէկը տեղէն շարժի, եթէ մենք յաջողութիւն գտանք երթալու, կը խոստանամ հաղորդել ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑԻ ԸՆԹԵՐ-ցողներուն:

ԱՐՁԱԳԱՆԳ ՓՐՕՎԻՏԵՆՍԷՆ

Օգոս. 28

«Տիգրիս» վերջին թուին մէջ կարգացինք Նիւպրի Բօրթի Կոչն ուղղուած մեր Հիւսէյնիկցի հայրենակիցներուն:

Շատ լաւ. բարի եւ ազգօգուտ կոչ մըն է որ պրն. Մ. Տ. Յակոբեան ըրած է «Տիգրիս» միջոցաւ: Իրաւ շատ ու շատ ցաւալի է տեսնել 500 երիտասարդ ունեցող համալրիկացիները առանց որեւէ կազմակերպութեան ընկերութեան, մասնաւոր այսպիսի երկիր մը մէջ, ուր ամեն պատեհութիւններ շնորհուած է մեզ, խորհելու եւ բարեգործական ձեռնարկներ ընելու, մեր հայրենակիցներու գարգացման եւ բարձրացման համար:

Փրօվիտէնի մէջ գտնուող փոքրաթիւ Հիւսէյնիկցիներս անցեալի մէջ եւ ամեն պատեհութեան, մեր հայրենակիցներուն գարգացման եւ յառաջացման համար աջակից եղեր ենք, եւ այժմ ալ կուգամք արձագանք տալ եւ յառաջ մղել սույն օգտակար ձեռնարկներ:

Այս գործն յառաջ երթալու եւ կազմակերպուելու համար, կուգամ թելադրելու, Ամերիկայի գաղտնաւ քաղաքներու մէջ գտնուող հայրենակիցներուն, որ ի մի գան, ժողովներ ընեն եւ իրենց թիւն ու հաւաքական գաղափարները «ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ»-ի միջոցաւ հրատարակեն, այսպէսով մեր ուժին եւ տեսութեանց օգտակից ըլլալով, եւ մօտակոյ ապագայի մէջ համաձայնութեան մը գալով զօրաւոր եւ հաստատ բարեգործական ընկերութիւն մը կ'ուենանք:

Ուրեմն անհաւուրեք եւ անտարբերութիւնը մէկդի ձգելով եւ մեր բարոյական ու նիւթական յոժեմն ի մի բերելով միանանք ընկերութեան մը շուրջըն եւ յոյսերով ներշնչուած գործենք: Ի միջի այլոց բանք որ Հիւսէյնիկցիներս ունէինք մի ընկերութիւն, բայց այնպէս պատճառներով կազմուած ունեցաւ, որուն զոյացած 400 տուարն կոտորած է վերջը Հիւսէյնիկ զրկուեցաւ որբերու եւ աղքատաց բաշխելու: Թող ներք մեզ պրն. Մ. Տ. Յակոբեան, փոքրիկ նկատողութիւն մը ընելու իր կոչին մէջ սարգած սխալին: Մեր գիւղի երկսեռ զարդներն բոցուած չեն, տարիներէ ի վեր է որ

մեր մանգաղ ու մեր մշակելու ձեւերը: Մեր բոյսերուն տուած աղբերը, բոյսերէն պահանջուած սնունդը կատարելապէս չեն պարունակիր, եւ անմիջական կերպով անոնք օգտակար չեն կրնար ըլլալ «վաճառականական արգասաւորչներուն» բացակայութեան պատճառաւ:

Ու այսպէս շատ մը մանրամասնութիւններու մէջ ազգէս եւ դանդաղ ենք. շատ մանրակերպ կը վատնենք եւ քիչ գործ կը տեսնենք, ան ալ մեծ դժուարութեամբ եւ շատ ծախքով: Իսկ Ամերիկայի եւ Եւրոպայի երկրագործը քիչ ժամանակի մէջ անհամարապէս կերպով թէ՛ շատ, թէ՛ դիւրին, թէ՛ լաւ եւ թէ՛ ամեն գործ տեսնելու միջոցները ունի:

Երկրի մը տնտեսական պայմաններու բարգաւաճումը երկրագործական բերքերու բարգաւաճումէն առաջ կուգայ ընդհանրապէս, ու մենք որ գրեթէ երկրագործ ժողովուրդ մ'ենք, նորագոյն գործիքներով եւ գիտական միջոցներով յառաջ տարուած երկրագործութիւն մը մեր ժողովուրդի տնտեսական բարեօրումին միակ փրկարար դարմանն ու միջոց ըլլալ:

Ուրիշ յօդուածով մը կը պարզենք թէ՛ Ամերիկայի երկրագործական վարժարանները ի՞նչ մեթոդի վրայ հիմնուած են, եւ թէ՛ Հայ երիտասարդը իր անձին ու Հայրենիքին համար անոնցմէ ի՞նչ օգուտներ կրնայ քաղել:

ԵՂԻԱ. Թ. ԳՅԻՐԵԱՆ (Ուսանող)

Հաստատուած են և օր ըստ օրէ աւելի յառաջ կերթան: Մեր գործը պիտի ըլլայ Հաստատուած դպրոցներուն մղում մը տալ և ոչ թէ վերահաստատել:

Մ. Տ. ՊՕՂՈՍԵԱՆ

ՆԱՄԱԿ ՈՒՍՏՐԷՆ

Օգոս. 28

Անցեալ կիրակէ տեղի ունեցաւ Հնչ. Աղագային յեղափոխական կուսակցութեան հրապարակային ժողովը, Ս. Փրկիչ եկեղեցւոյ ժողովարարահին մէջ, նախագահութեամբ Գեր. Յովսէփ եպ. Սարաձեանի: Պուռն բազմութիւն մը գրաւած էր ժողովարարը:

Ժողովի ատենակազմ Պրն. Կ. Մարգարեան ժողովը բացաւ, յոսնկայս «Տէր կեցո» երգով:

Օրուան ատենախօսն հրաւիրուած էր Պատ. Հ. Ալլէն, տիպար միսիօնարը, սահայն դժբախտաբար հեռագրած էր որ չի կրնար գալ, կարևոր գործի մը պատճառաւ:

Նախ ատենախօսնց Պատ. Պ. Պէնէ-եան նիւթ աւնենայով «Փրկութիւն»: Պատուելին կը խօսէր աւելի կրօնական ոգով, սակայն մեծ գառնի կային անկէ ատենիւր:

Յաջորդ ատենախօսն էր Ազգ. յեղ. կուսակցութեան կեդրոնական վարչութեան անդամ պրն. Կ. Յ. Փափագեան, որ բացատրեց կուսակցութեան արդի ուղիները:

Ի միջի այլոց ըսաւ, «Հնչ. կուսակցութիւնը միշտ կ'զգուշանայ պոռտախօսութեան և յախուռն գործունէութեան: Միշտ իր աչքի առաջ ունի Հայ ժողովրդի ներկայ կացութիւնը, և թըն-նամիջի զօրութիւնը ու կանոնաւոր կազմակերպութիւնը: Յետոյ շեշտեց այն կէտը թէ՛ խելք, դրամ, ոյժ և անձնութիւնը միմեանց քով գալով հրաշքներ պիտի գործեն: Մեր հարուստները մեղադրելի չեն, ըսաւ, վասնզի մենք զանոնք հարուստեցինք անցելոյն մէջ: Մեր վարիչները կուսակցամոլները եղան: Մէջ քէ ըստ իմ միտքիս մէջ բանակ: Ահա կ'ըստար և մէկ հայրենիքի փրկութեան համար աշխատինք: Բանի մը անհասանելի երբէք իրաւունք չունին պոռտախօսութեամբ և յախուռն գործունէութեամբ վտանգել ամբողջ ազգ մը, այլ բոլոր մէկ գաղտնաբար շուրջ հաւաքուած պէտք է գործենք Հայրենի-եաց փրկութեան համար...» Ապա, իւր խօսքը անտարբերութեամբ ուղղելէ յետոյ, վերջացուց արժանաւորով բուռն ծափահարութեամբ:

Վերջին ատենախօսն էր Գեր. Նախագահ Հայրը. որ հայրական զուարթ դէմքով մը ըսաւ. «Բոլորք ալ կը ինքեք, ես ալ կը ինքեք մեզի հետ: Բայց գիտէք ինչո՞ւ: Հիմա պիտի ըսէք, ըսաւ Սրբազան Հայրը, թէ հինգ տարի առաջ Հնչակեանները քարով, փայտով, նստաբաններով կը վճռուէին այս ժողովարարահին, ու այսօր դու Հնչակեաններու ժողովին կը նախագահես: Այո, կը նախագահես և կը սիրես ալ ներկայ ուղիութիւնը: Յետոյ թեղաբոց ներկաներուն, որ ոյժ տան ներկայ ուղիութեան, և վերջացուց խօսքը քանի մը հայրական խրատներ տալով:

Յետոյ Ատենակազմը իւր շնորհակալութիւնը յայտնեց ժողովրդին ի դիմաց տեղւոյս Հնչակեան Մասնաճիւղին, ու ըսաւ, որ մասնաճիւղը այսուհետև շուտ շուտ այսպիսի օգտակար հրապարակային ժողովներ պիտի ունենայ:

Վերջին երգն էր Պրն. Մ. Ազիլեանի «Նրկու Եղբարք Մէկ Մօր Որդի», որ շատ սրտախաղ էր և հայ կանանց քանիսի աչքերէն արտասուեց կաթիլներ քաղեց:

Ժողովը փակուեցաւ ուրախ և օգտակար տպաւորում մը թողնով մեզ, ներկայիցս, վրայ:

Այսպիսի լուրը և օգտակար ժողով երբէք չէինք չունեցեր, կ'ըսէին շատերը: Ուրեմն շատ գոհ պիտի ըլլանք որ մերթ ընդ մերթ այսպիսի ազգային ժողովներ տեղի ունենան, որ ժողովրդի միտքը կը կրթեն, և թէ վտանգ ենք որ վաղ կամ անագան անտարբեր հետարակութիւնը ձեռք պիտի սայ լուրջ գաղափարին շուրջը հաւաքուող գործիչներուն:

ԳԱՌՆԻԿ

ԳՈՐԾԱՂՈՒՄ

(Նամակ Պրէքթընէն)

Օգոս. 30

Ամէն երկրի մէջ մամուլը միջնորդ մըն է գաղափարները յեղաշրջելու, կարծիքներ փոխանակելու և հանրութեան վերարեօգ խնդրոց օգտակար լուծում մը տալու: Մեր մէջ ալ մամուլը նոյն դերը կատարելով պէտք է առաջնորդէ ժողովրդին, ցոյց տալով վիճաբանութեան նիւթ երող խնդրոցն օգտակար կամ վընասակար կողմերը: այն ատեն ժողովրդի, եթէ ոչ ամբողջը, գէթ մեծամասնութիւնը կը հետեի իրեն առաջնորդող ձայնին:

Ամենուն, մասնաւորաբար Հայերուն ուշադրութիւնը կը հրաւիրեմ վերոյգրեալ նիւթին: Այս խնդրը մեզ համար Ազգ. պատուոյ և միանգամայն հացի խնդիր է. ուրեմն հարկ է զայն վիճաբանութեան նիւթ ընել և թեր ու դէմ կարծիքներ փոխանակելով եզրակացութեան մը հանգել: Երկնիքները ճիշդ այս օրերս ետեւէ են ամեն տեղ կազմակերպելու եւ յառաջիկային գործադուլի հաւանականութիւն կայ: Այդ ատեն, Հայերուն բռնելիք դիրքը ի՞նչ պէտք է ըլլայ: Ցարէ կ'զգածներ յայտնի են. բայց յետ այսու պէտք է որ որոշ ուղիութիւն մ'ունենանք:

Այստեղ խնդիրը երկու ճիւղի կը բաժնուի Ա. Ազգ. պատուոյ խնդիր. Բ. Հացի խնդիր. գործադուլը կորսելու Ազգ. պատուը հողի հաւասարացնել ըսել է, երկրորդը չը կորսելով անոնց միանալը հացի խնդիրը շուրջը նետել է: Ահա այս երկու հակառակութեանց մէջէն զմեզ վերկող և որոշ ուղիութեան մը առաջնորդող կը կարծուիք: Այս մասին կուզեմ իմ տեսութիւններս յայտնել, որով ընթացողը կարենայ ըմբռնել խնդրոցն երկու կողմէն այ: Գործադուլը կորսողները կերպով մը պիտի արդարացնեն եթէ անոնք համարաշխուհիւնով վարուին: Որովհետեւ եթէ Երկնիքն կազմակերպութիւնը յաջողի, այլևս մեր հացը կը կորսուի, մենք, Հայերս քանի մը շաբաթ գործ կունենանք և անկէ ետք ամէն տեսակ զրկանքով ու նախատիքներով մեզ կը ձանձորացնեն և կըստպանին ինքնարարարք մը: Այս գործը, որուն ապացոյց շատ կայ: Այսչափ «Երկնիքն» հայր կան թող մէկը ըսէ թէ արուստն երեք ամիսը Երկնիքն գործարանի մը մէջ հանգիստ և գոհ սրտով ու առանց աշխուժեան գործած է: Մինչդեռ անգլիոյ ոչ «Երկնիքն» գործարաններու մէջ Հայերը տարիներով կը գործեն: Եթէ Հայերը կարգապահութիւնը յարգելով իրարու հետ համեմատելի կ'զգանք, գիտնանք գործադուլը կորսելով ազգ. պատուոյն արատ մը բերած չեն ըլլար, և Հարուստիկարար կը մնան և կաշխատին սոյն գործարանի մէջ, բայց կարծես բնածին դժբաղդ յատկութիւն մըն է՝ երբ հինգ Հայ իրար քով եկան, այն օրէն կրկնուի կարգաւ կուր, զիրար ատել, իրարու նախանձիլ և այլն:

Օրինակ մը տալու համար յիշենք 98ի Պրէքթընի գործադուլը որ ատեն բազմաթիւ Հայեր լեցուած էին Հոս, այսօր պէտք էր որ այս քաղաքին մէջ առ նուազն 150 Հայ գտնուէին, բայց այժմ 15 ալ չկայ և այն ցրուած և իրարու գրեթէ անձեռնի: D. W. Field գործարանը 40 Հայեր մտած էին և գործատէրը խոստացած էր մշտապէս բոլորն ալ պահել, սակայն գործադուլէն քանի մը շաբաթ վերջը բոլորն ալ քշելով տեղերին հրէայ և բոլիւններ լեցուց: Այժմ քննենք թէ յանցանք որի՞քով էր գործատիրոջ թէ՞ Հայոց. ես պիտի ըսեմ Հայոց քով էր, Հայերը որ սահպանում բոլորն վրայ սարսափ ձգելով քաղութիւն ցոյց տուած և գործադուլը աւարած էին վերջը անանկ խայտառակութիւններ հանեցին որ ոչ միայն իրենց՝ այլ Ազգ. անուան ալ արատ բերին: Գործարան մտած օրերէն սկսեցին իրենց յատկացուած տանը մէջ աղմուկ իրարանցում յարուցանել, մինչ առաւօտ դրացիներուն ձանձրութիւն տալ գործարանին մէջ կը ռիւ ընել, իրար վրայ գանդատել, մէկ զմիւսը նախատելով ինքզինքը յառաջ ընել, մինչև անգամ գործարանի տե-

սուչներու վրայով՝ գործատիրոջը գարծատիրոջը գանգատել և այլն:

Երանի թէ ատով գոհ ըլլային, Գործատիրոջը իրենց տրուած անկողին վերմակ և այլ կահարասիքը կտոր կըտոր տանելով Պոսթօն և այլուր ծախելով իրենց դիմեմով կողորդին վրայ գաւաթ մը գարիջուր և սակեցուցած են. և ահա՛, ատով մարդը զգուանք զգալով զանոնք արտաքրած և այն ատենէն որոշած է այլևս Հայ չընդունիլ:

ԿԱՐՕ

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹՒՐԻՒՔԻԱ

Լոնտոնի թայմսի Օտեսայի թղթա-կիցը Օգոստ. 15 ին հետեւաւ կը հեռագրէ:

Անցեալ ամսոյն մէջ Թիւրքիոյն քիւրտեր շատ մը արշաւանքներ գործած են Ռուսիոյ հողին վրայ:

Կ. Պոլսոյ Ռուս դեսպանը այս մասին թիւրք կառավարութեան դիւանագիտական դիմումները ըրած է:

Սակայն վերջերս 300 հոգիէ բաղկացած քրտական զինեալ խումբի մը Ռուս սահմանապահ զօրաց վրայ գործած յարձակումը Ռուս կառավարութեան ուշադրութիւնը խորապէս ուղղեր է այդ շարիքին:

Իմ ճամբորդութեանս մէջ կատարած քննութիւններէս համոզուեցայ թէ երբէք չափազանցութիւն չկայ կովկասի թիւրքերու քրտներուն մէջ թէ Պարսկա-Ռուս և Թըք-Ռուս սահմաններուն վրայ սպանութիւններ և կողոպուտներ առօրեայ հասարակ բաներ են: Թիւրք իշխանութիւնը կամ չկրնար և կամ կամիր այդ անիշխանական դուրսեան վերջ մը տալ: Տեղէ տեղ ճամբորդող վաճառականներ կամ հարուստներ ստիպուած են զինեալ խումբերու վճարել և հետեւին տանիլ ապահովութեան համար:

«Օտեսքը իսթօք» այս աւուր թիւրք կ'սէ թէ ուրիշ լաւ զինուած պարսիկ աւազակախումբ մը անցեր է Արաքս գետը և մտն ուսական հողին վրայ գանձակ: Անոնք Շուշոյ գաւառին մէջ շատ մը խժգոնութիւններ կատարած՝ բազում արժէքաւոր իրեղէններ թալանած, մեծ թուով ձիեր ու արջառեղէններ առած. նոյն ատեն կառավարական փոթիլն ուղղեւորութեան ամէն պարագայից վրայ յով հարկաւոր տեղեկութիւնները քաղեր են խուճապով մը փախած, անհետացած են Պարսից սահմանապահին անգին և անանգամ մը ալ երևան եկեր են Ռուսիոյ Շուսանքի գաւառին մէջ կառավարութեան փոթիլը կողոպտելու. որք ուրիշ աւարառութիւններ ալ ընելով, իրենց վրայ զրկուած Ռուս զինուորներուն իրենց հասնողէն առաջ, փախեր անհետացեր են: Լրագրից կը յաւելու, թէ այդ գաւառներուն մէջ իրաց վիճակը անտանելի է. յոռեգայն՝ քան այն ժամանակները երբ կովկասեան ցեղերը Ռուսիոյ դէմ կը կռուէին:

Այս բաներէն ծագելիք մեծագոյն վտանգը այնպիսի ըլլայ, որ Ռուս կառավարութիւնը առիթ պիտի ունենայ հարկ համարած ժամանակը զօրք զրկել այդ սահմաններուն վրայ:

Անոնք որ ծանօթ են Ռուս քաղաքականութեան, տեսեր են թէ Ռուսիա ինչպէս միշտ օգտուեր է այս կարգի անկարգութիւններէ և իւր սահմանները ընդարձակեր:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Ֆրանսական արտաքին գործոց նախարարին Ռուսիա այցելելու ունեցնալու ատակին վարագուրը վերջերս բացուեցաւ: Պրն. Տէլքսաի Ռուսիոյ ելումտանի նախարարին հետ տեսակցութիւն մը ունեցեր է, վերջը ներկայ եղեր կոմս Մուրաւլիէֆ: Ասոնց խորհրդակցութեան առարկան եղեր է Ռուսիոյ Ասիական Նահանգներէն մի քանի տեղերու մէջ երկաթուղիներ ձգելու ծրագիր մը, որը թէ և արտաքուստ առեւտրական հաշիւներ կը ցուցնէ սակայն իսկապէս ռազմագիտական կարևորութիւններու վրայ մշակուեր է: Ռուսիոյ ելումտանի նախարարը նախ Լոնտոն դիմեր էր յիշեալ նպատակին համար հարկաւոր փոխառութիւնը կնքելու, իսկ շարժուելով՝ դիմում ըրեր է Ֆրանսական կառավարութեան, Ֆրանսական դրամադրութեամբ այդ խնդիր ի կատար հանելու:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՊԱՊԸ

Տարիէ մը ի վեր էր որ Հոռովի Պապին կողմանէ շատ ջանքեր կ'ըլլային, որ պէս զի Բեդերպուրի մէջ Պապը դիւանագիտական արտաքին կարգի ներկայացուցիչ մը ունենար, և այս օրերս այդ ջանքերը յաջողութեամբ պատկուեցան: Չարը ընդունեց յիշեալ առաջարկը:

Վատիկանի եւ Բեդերպուրի միջև յառաջ եկող քաղաքական այս կապին մեծ կարևորութիւն կը տրուի: Պատմութեան յեղաշրջումին մէջ նոր ազդեցութիւն մը աւելցաւ: Պապին Չարին հետ ունեցած այս քաղաքական կապին ազդեցութիւնը Արեւելքի մէջ Ռուսիոյ համար իւր փոխարքաւորութեամբ, սակայն պիտի ըլլայ: Նոյնպէս պիտի ծառայէ Ֆրանսա-Ռուսական դաշնակցութեան կապին ամրապնդման, եւ փոխադարձաբար Ֆրանսական կառավարութեան առ Վատիկան ունեցած վերաբերմունքի տրամադրութեան լաւացման:

ՖՐԱՆՍԱ

«Ֆիկար» կը գրէ թէ Փարիզի մէջ ձեռքարկուող դաւադրներէն շատերը խոստովաներ են թէ կառավարութեան դէմ դաւադրութիւն կար:

ՉԻՆԱՍՏԱՆ

Չինո-Ռուսական ուսմանազուլիս վրայ Չինաստանցիներ յարձակեր են մի խումբ Ռուս մեքենահատներու եւ անոնց օգնականներուն վրայ եւ ամենքն ալ սուրբ անցուցեր: Այս դէպքէն գէշ հետեւանքներ կը վարկուին, եւ կը խորհուի թէ Ռուսիա այս բանը առիթ ընելով զօրաւոր ճնշումներ ձեռք պիտի առնէ Չինական կառավարութեան վրայ՝ անոր ընդունել տալու իր այն առաջարկները, որ ցարդ անկէ մերժուեր են:

ՖԻՆԱՆՍԱՆԵՐԸ

Ֆինանսները ահագին թուով Ռուսաստանէն կը գաղթեն դէպի Աւստրալիա, Գանատա եւ Մ. Նահանգները: Փետրեղաբէն ի վեր 8000 հոգի երկրէն մեկներ են: Այսպիսով Ռուսիոյ ամենէն ժըրման եւ արդիւնաբեր մէկ ժողովուրդը կը բացակայի՝ իր վրայ տեղի ունենալիք բռնութիւնէն խուսափելու:

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Նովէի վրէժիէ կը սէ կայսերական հաւանութեամբ և Պուլկար կառավարութեան բազմանքովն է որ Ռուս գնդապետ Էֆիմենճին, կերթայ Պուլկարի մէջ պտոյտ մը կատարելով Պուլկար բանակը քննելու:

Այս իրականութիւնը կուգայ ամրապնդելու Ռուս եւ Պուլկար բանակներու միջեւ եղած կապը, զոր Պ. Սթանկուլօֆ արուեստական միջոցներով խզել փորձեց:

